Abdullah Ocalan, *Democratic Confederalism, «Transmedia Publishing Ltd», London, 2011, 47 p.*

Աբդուլլահ Օջալան, *Ժողովրդավարական համադաշնություն, «Տրանսմեդիա Փաբլիշինգ ՍՊՀ», Լոնդոն, 2011, 47 էջ*

«Քուրդիստանի աշխատավորական կուսակցության» (ՔԱԿ) առաջնորդ Աբդուլլահ Օջալանի սույն գրքույկը նվիրված է քրդական էթնո-դավանական, հասարակական-քաղաքական շրջափուլերին և դրանց գաղափարական ներկայիս հիմնավորումներին: Հեղինակը Ժողովրդավարական համադաշնությունը (ԺՀ) ներկայացնում է իբրև ազատական, սոցիալ-քաղաքական համակարգ, որի ձևավորման վրա ազդեցություն են թողել Մյուրեյ Բուկչինի[1] գաղափարները, իսկ ՔԱԿ-ի սկսած պայքարը՝ որպես երկբևեռ աշխարհակարգի պայմաններում սեփական ճանապարհի փնտրտուք: ԺՀ-ն ոչ թե էթնիկ կամ ազգային, այլ հասարակական ազատության և ժողովրդավարացման ուղղվածություն ուներ և իր առջև խնդիր էր դրել ստեղծել ազգային պետություն:

Ինչպես իրավամբ նշում է Օջալանը, ազգ-պետություն և հոմոգենիկ ազգային հասարակություն հիմնելը շատ հաճախ հանգեցնում է բռնի ուժի կիրառման, հանգամանք, որը բազմիցս դրսևորվել է XIX և XX դարերում (էջ 13): Նա անդրադառնում է նաև կրոնին, որը հիրավի, իբրև ազդեցիկ գործոն ներկայումս օգտագործվում է ոչ միայն ներպետական, այլև միջպետական և աշխարհաքաղաքական հարաբերություններում: Ըստ հեղինակի՝ որոշ հասարակություններում այն բավականին ազդեցիկ դեր ունի: Մուսուլմանական կրոնն այդ առումով բավական ճկուն է, սակայն այն այլևս իր ավանդական դերակատարումը չունի. նրա գործառույթները սահմանափակված են ազգ-պետության կողմից կրոնին տրվող հնարավորություններով (էջ 17):

Օջալանը նշում է, որ քրդերի համար մասնատված քրդական ազգ-պետության ստեղծումը նպատակահարմար չէ: Նա գտնում է, որ դա իրականացվում է կապիտալիստական կարգերի պայմաններում, որոնց ընդդիմանալու մարդկանց ցանկության բացակայությունը նրանց զրկում է ազատությունից, ուստի և քրդական ազգ-պետության ստեղծումն այս պահին, ըստ նրա՝ կասկածի տակ է (էջ 19):

---

[1] Մյուրեյ Բուկչինը (1921-2006) ամերիկացի անարխիստ, սոցիալ-ազատական գաղափարներ կրող հեղինակ, պատմաբան և քաղաքական տեսաբան էր, որի հետ Օջալանը նամակագրական կապ է ունեցել բանտից:

Հիշյալի համատեքստում Օջալանը կարևորում է ժողովրդավարական գործընթացները, որոնք պետք է իրականացվեն քրդաբնակ տարածքներում: Դրանց համար կան պատմական պատճառներ, սոցիալական յուրահատկություններ և այլ իրողություններ, ինչպես, օրինակ, այն, որ քրդերի խիտ բնակեցված վայրերը բաժանված են մերձավորարևելյան չորս պետությունների (Թուրքիա, Իրան, Իրաք, Սիրիա) միջև: Այդ իրողությունները թելադրում են ժողովրդավարական լուծումներ, որոնք հիմնվում են ներկայացուցչական ժողովրդավարության և տեղերում ինքնակառավարում կազմակերպելու վրա: Որքան ուժեղ է մասնակցությունը, այնքան կայացած է ժողովրդավարության այդ տեսակը: Այն ժամանակ, երբ ազգ-պետությունը հերքում է ժողովրդավարությունը, ԺՀ-ն վերածվում է շարունակական ժողովրդավարական գործընթացի (էջ 26-27):

Օջալանը նշում է, որ, ի տարբերություն պետությունների, ԺՀ-ն բաց է քաղաքական այլ խմբերի առջև, ճկուն է, բազմամշակութային և ուղղված է կոնսենսուսի ձևավորմանը՝ ստեղծելով ինքնակառավարման հնարավորություն: ԺՀ-ազգ-պետություն համագոյակցումը, ըստ Օջալանի, հնարավոր է, սակայն մինչ այն պահը, երբ ազգ-պետությունը որոշում է խառնվել ինքնակառավարման կենտրոնական հարցերին: Օջալանը չի կասկածում, որ ԺՀ-ն չի պատերազմում ազգ-պետության դեմ, սակայն վերջինիս կողմից իրականացվող ձուլման քաղաքականությանը չի կարող անտարբեր վերաբերվել:

Պետության տապալումը Օջալանը դիտարկում է որպես աստիճանաբար իրականացվող գործընթաց: Ըստ նրա՝ պետության՝ հեղափոխական ճանապարհով տապալումը հանգեցնում է անկայուն իրավիճակի, մինչդեռ ԺՀ-ն իր ուշադրությունը բևեռում է սոցիալական, ինչպես նաև ազատությանը և արդարությանը վերաբերող խնդիրների լուծման վրա: Հեղափոխությունները կամ նոր ազգ-պետության հիմնումը չեն հանգեցնում կայուն փոփոխության: Ազատությունն ու արդարությունը կարող են իրականացվել ժողովրդավարական-համադաշնային դինամիկ գործընթացի ներքո (էջ 32):

Եթե ազգ-պետությունը այնուամենայնիվ, փորձում է հարձակումներ իրականացնել, ապա հարկ է, որ ԺՀ-ն ինքնապաշտպանություն իրականացնի սեփական ուժերով: Ընդ որում, այդ ինքնակազմակերպումն ու ինքնապաշտպանությունը չեն սահմանափակվում կոնկրետ սահմաններով, ուստի ԺՀ-ն կարող է վերածվել վերսահմանային դաշնության: Դա չի նշանակում, որ ազգ-պետությունների հարձակումները պետք է ընդունվեն: ԺՀ-ն ամբողջ ժամանակահատվածում ինքնապաշտպանվելու է: Այն սահմանափակված չէ իրականացնելու իր ինքնակազմակերպումը որոշակի տարածքում և վերածվելու է վերսահմանային համադաշնության, եթե հասարակությունների մեջ առկա է միևնույն ցանկությունը (էջ 32):

Հատկանշական է, որ Օջալանի աշխատությունը զուգադիպեց Մերձավոր Արևելքում տեղի ունեցող զարգացումներին: Սիրիական և իրաքյան հակամարտությունները, այնուհետև քրդական հիմնախնդրի հետ կապված

Թուրքիայի գործողությունները նրան ստիպեցին հանգելու այն համոզման, որ ԺՀ-ն դեր ունի հիշյալ գործընթացներում՝ քրդական հիմնախնդրի հանգուցալուծման սեփական գաղափարները առաջ տանելու հետ կապված:

Օջալանի հիշյալ գաղափարներով են բացատրվում 2015 թ. հուլիսից ի վեր Թուրքիայում տեղի ունեցող գործընթացները, որտեղ քրդական միջավայրում առանցքային դերակատարում ունեցող ՔԱԿ-ը, չհամակերպվելով պաշտոնական Անկարայի քրդական հիմնախնդրի նկատմամբ որդեգրած քաղաքականությանը, հայտարարեց թուրքական իշխանությունների հետ կնքված զինադադարի ավարտի մասին՝ դիմելով բացահայտ առճակատման: Օջալանի արծարծած գաղափարները տարածում են գտել քրդական միջավայրում, քանզի ներկայումս քրդերը ակտիվորեն ներգրավված են մերձավորարևելյան տարածաշրջանային հակամարտություններում, անգամ մասնակցում են քրդաբնակ տարածքներ չհամարվող բնակավայրերից դուրս տեղի ունեցող ճակատամարտերին:

Օջալանն իր աշխատությունում, ըստ էության, գիտակցում է ազգ-պետությունների գերակայությունը առանձին հիմնախնդիրներում, սակայն փորձում է լուծումներ առաջարկել, որոնք են՝ միջազգայնորեն ճանաչված ժողովրդավարական գործընթացների իրականացումը քրդական միջավայրում, որոնք, ըստ նրա, կարող են հանգեցնել քրդաբնակ տարածքների համադաշնային կարգավիճակի ձևավորմանը ժողովրդավարական գործընթացներով աչքի չընկնող և քրդաբնակ տարածքներ ունեցող տարածաշրջանային չորս պետություններում: